Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024 թվականի մարտի 7-ի N67-L որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի մարտի 12-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք http://www.idbank.am/ հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

“ROCKET LINE” ՎԱՐԿԻ/ՎԱՐԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻ ԵՎ “ROCKET LINE” ՎԱՐԿԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ/ՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԱՁԳՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ				
Ընդհանուր պայմաններ		**“ROCKET LINE” ՎԱՐԿ**	**“ROCKET LINE” ՎԱՐԿԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ**	**“ROCKET LINE” ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԱՁԳՈՒՄ**
1.	**Վարկատեսակ**	Վարկ		
2.	**Վարկի նպատակ**	Սպառողական՝ անկանխիկ վճարումներ[1] կատարելու նպատակով	Սպառողական՝ Rocket line վարկերի միավորման նպատակով	Սպառողական՝ Rocket line վարկի վճարման հետաձգման նպատակով
3.	**Արժույթ**	ՀՀ դրամ		
4.	**Նվազագույն սահմանաչափ**	10 000	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
5.	**Առավելագույն սահմանաչափ**	10 000 000		
6.	**Սահմանաչափի ներքո տրամադրվող վարկի նվազագույն գումար**	3 000	30 000	30 000

[1] Բացառությամբ ցանկացած տեսակի փոխանցման, բանկային և քարտային հաշիվների համալրման և ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ունեցած ցանկացած տեսակի պարտավորությունների մարման:

7.	**Սահմանաչափի ներքո տրամադրվող վարկի առավելագույն գումար**	10 000 000		
8.	**Տարեկան անվանական տոկոսադրույք**	0% - 21.7%	21.7%	21.7%
9.	**Տարեկան փաստացի տոկոսադրույք**[2]	0% - 24%	24%	24%
10.	**Վարկի նվազագույն ժամկետ**	1 ամիս	9 ամիս	9 ամիս
11.	**Վարկի առավելագույն ժամկետ** [3,4]	60 ամիս		
12.	**Տրամադրման եղանակ**	Անկանխիկ՝ հաճախորդի ընթացիկ հաշվի միջոցով, • «IDBanking» և «Idram Internet Payment System» համակարգերի առցանց հարթակներում • Idram&IDBank բջջային հավելված		
13.	**Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ**	Ժամկետի վերջում/Անուիտետային	Անուիտետային	Անուիտետային
14.	**Ապահովվածություն**	Վարկարժանության գնահատական		
Միջնորդավճարներ				

[2] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

[3] Մինչև 30,000 ՀՀ դրամ անկանխիկ վճարումներ կատարելու դեպքում վարկի առավելագույն ժամկետը 6 ամիս է, 30,000 ՀՀ դրամից մինչև 100,000 ՀՀ դրամի դեպքում 36 ամիս է, իսկ 100,000 ՀՀ դրամից ավել վճարումների դեպքում՝ 60 ամիս: Ընդ որում, հաճախորդը կարող է ստանալ վարկեր հետևյալ ժամկետներով՝ 1, 2, 3, 6, 9, 12, 15, 18, 21, 24, 27, 30, 33, 36, 39, 42, 45, 48, 51, 54, 57, 60 ամիս:

[4] Մինչև 6 ամիսը ներառյալ ժամկետով վարկերի դեպքում վարկի մարումն իրականացվում է ժամկետի վերջում, իսկ 9-ից 60 ամիս ժամկետով վարկերի համար սահմանվում է անուիտետային մարման եղանակ:

15.	**Վարկային հայտի ուսումնասիրության վճար**	Չի սահմանվում
16.	**Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար**	Չի սահմանվում
17.	**Վարկային հաշվի սպասարկման վճար**	Չի սահմանվում
18.	**Ընթացիկ հաշվի բացման վճար**	Չի սահմանվում
19.	**Ապահովագրություն**	Չի պահանջվում
Վարկառուի նկատմամբ պահանջներ		
20.	**Կարգավիճակ**	ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ
21.	**Տարիքային սահմանափակում**	Վարկառուի տարիքը վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է 21 տարեկանից պակաս լինի և մինչև վարկի մարման վերջնաժամկետը չպետք է գերազանցի 70 տարեկանը

		Միավորման վարկատեսակից օգտվելու նախապայմաններ	**Վճարման հետաձգման վարկատեսակից օգտվելու նախապայմաններ**
22.	**Միավորման/վճարման հետաձգման ենթակա գործող Rocket line վարկերի քանակ (մեկ գործարքի իրականացմամբ)**	2-20 վարկ	1 վարկ
23.	**Միավորման/վճարման հետաձգման ենթակա վարկ(երի) նվազագույն հանրագումարային մնացորդ (մայր գումար + տոկոսագումար)**	30 000	
24.	**Միավորման/վճարման հետաձգման ենթակա վարկերի նկատմամբ պահանջներ**	«Ժամկետի վերջում» մարման պայմանով տրամադրված վարկերը	

25.	**Վարկատեսակից օգտվելու համար սահմանված միանվագ վճար**[5]	2% (առավելագույնը 100,000 ՀՀ դրամ)
26.	**Միավորման/վճարման հետաձգման օրվա դրությամբ չունենալ ժամկետանց վարկային պարտավորություններ**	
27.	**Չունենալ ՀԿԱԾ կողմից կիրառված արգելանք**	
28.	**Չունենալ դասակարգված վարկային պարտավորություններ (ակտիվներ) առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում**	
	Տույժեր, տուգանքներ	
29.	**Ժամկետանց վարկի գծով**	0.1%
30.	**Ժամկետանց տոկոսագումա**	0.1%
31.	**Վարկի վաղաժամկետ**	Չի սահմանվում
32.	**Վարկի վաղաժամկետ մարում պահանջելու հիմքեր**	Բանկն իրավասու է պահանջել վարկի վաղաժամկետ մարում, եթե 1) վարկի ստացման համար ներկայացված տեղեկությունը կեղծ կամ անարժանահավատ է 2) հաճախորդը չի կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները 3) այլ հիմքեր՝ համաձայն պայմանագրի
	Հայտի վերաբերյալ այլ պայմաններ	
33.	**Վարկի տրամադրման դրական գործոններ**	1) դրական վարկային պատմություն 2) վարկարժանության դրական գնահատական 3) բավարար դրամական հոսքեր
34.	**Վարկի մերժման գործոններ**	1. Վարկատեսակի պայմաններին անհամապատասխանություն 2. Հաճախորդի բացասական վարկային պատմություն 3. Հաճախորդի հետ փոխկապակցված անձի բացասական վարկային պատմություն 4. Անբավարար եկամուտներ 5. Վարկարժանության ոչ բավարար մակարդակ 6. Բանկի տեսակետից գրավի իրացվելիության ոչ բավարար մակարդակ 7. Բանկի համար անցանկալի հաճախորդ 8. Կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում 9. Վարկի վերադարձելիությունը կասկածի տակ դնող տեղեկատվության առկայություն 10. Հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայություն 11. Այլ հիմքեր
35.	**Որոշման կայացման**	5 րոպե

[5] Միավորման/վճարման հետաձգման հնարավորությունից օգտվելու համար սահմանված միանվագ վճարը չի ներառվում վարկի փաստացի (էֆֆեկտիվ) տոկոսադրույքի հաշվարկի մեջ: Միավորման/վճարման հետաձգման հնարավորությունից օգտվելու համար սահմանված միանվագ վճարի գանձման պայմանը գործում է սկսած **08.09.2024թ.-ից:**
Վճարը հաշվարկվում է միավորման/վճարման հետաձգման ենթակա վարկ(երի) նվազագույն հանրագումարային մնացորդի վրա:

36.	**Վարկառուին վարկի վերաբերյալ կայացված**	5 րոպե
37.	**Վարկի դիմումի ընդունման, ձևակերպման**	• IDBanking.am առցանց հարթակ • Idram&IDBank բջջային հավելված • Idram Internet Payment System
38.	**Որոշման վավերականության առավելագույն ժամկետ**	1 աշխատանքային օր
Հաճախորդի կողմից Բանկին տրամադրվող փաստաթղթեր (տեղեկատվություն)		
39.	Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ (տվյալներ)	
40.	Սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) (համար)	
41.	Անհրաժեշտության դեպքում այլ տեղեկատվություն	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

2. Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

3. Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:

8. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո,

որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

9. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

10. Վարկերի միավորման նպատակով տրամադրվող վարկատեսակի տրամադրման համար անհրաժեշտ է Միավորման վարկատեսակից օգտվելու՝ սույն ամփոփագրում նշված նախապայմանների միաժամանակյա առկայությունը: **Միավորման հնարավորությունից օգտվելու համար սահմանված միանվագ վճարի վճարումն ինքնին** չի երաշխավորում նշված վարկատեսակի տրամադրումը և վարկի տրամադրման մերժման դեպքում վերադարձման ենթակա չէ:

11. Վարկի վճարման հետաձգման նպատակով վարկատեսակի տրամադրման համար անհրաժեշտ է Վճարման հետաձգման վարկատեսակից օգտվելու՝ սույն ամփոփագրում նշված նախապայմանների միաժամանակյա առկայությունը: Վճարման հետաձգման **հնարավորությունից օգտվելու համար սահմանված միանվագ վճարի վճարումն ինքնին** չի երաշխավորում նշված վարկատեսակի տրամադրումը և վարկի տրամադրման մերժման դեպքում վերադարձման ենթակա չէ:

12. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձմանն ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

13. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

14. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

15. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

16. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

17. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

18. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

19. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի և Idram&IDBank բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ